ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 20 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Ա. Անտոնյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Ա. Անտոնյանը 03.05.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ 8-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

3. Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացնում է հետեւյալ հիմնավորումները՝ վիճարկվող նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին՝ այն առումով, որ հստակորեն չի սահմանում, թե որ գործողություններն են ենթադրում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրելու» զանցակազմի մասին, չի հստակեցնում, թե որ մեղքի ձեւի դեպքում է պատասխանատվությունն առաջանում՝ անզգուշությամբ, թե դիտավորությամբ կատարված արարքի դեպքում եւ դրանցից յուրաքանչյուրի համար չի տարբերակում պատասխանատվության չափը: Հոդվածը նույն հարթության վրա է դնում որակապես տարբեր իրավախախտումները եւ դրանց համար նախատեսում է միեւնույն պատասխանատվության չափը:

Ըստ դիմողի՝ իրավական նորմը կարող է համարվել որոշակի, եթե այն այնքան հստակ է ձեւակերպված, որ թույլ չի տալիս որեւէ կամայական մեկնաբանություն՝ իր իրավական հետեւանքներով հանդերձ:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող հոդվածով սահմանված դրույթը վերանայելը եւ կատարելագործելը կարող է նպաստել իրավակիրառական պրակտիկայի իրավաչափ զարգացմանը, քանի որ Հայաստանի Հանրապետության պոզիտիվ պարտականությունն է պաշտպանել միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված անձանց իրավունքները:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Ա. Անտոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

20 մայիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-13